


ԱՂՔԱՏԵՐՈՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, ո՞ւր է հարուստներու ուրախութիւնը եւ կամ անոնց մխիթարութիւնը, ո՞վ աղքատ, որ կը ցանկասեւ կը տենջաս եւ կը տխրեցնես քու հեշտ եւ խաղաղ կեանքդ, ինքզինքդ դժբախտ մը եւ թշուառակամ մը կը նկատես եւ կ'արհամարհես քու թանկագին հաստատութիւնդ: Գողերէն վախնալու կարիքը չունիս եւ ոչ ալ աւագակներէն երկիւղելու: Պէտք չունիս մտահոգուելու ո՛չ դաշտին խտտերով եւ ոչ ալ լեռներու արօտավայրերով: Պէտք չունիս հովիւներու նենգութենէն վախնալու եւ ոչ ալ գազաններու յափշտակութենէն: Պէտք չունիս բռնաւորներու բռնութիւններէն եւ ոչ ալ իշխաններու կալանքներէն դողալու: Նախանձոտները չեն նախանձիր քեզի, քսակահատները չեն խարեր քեզ, ոչ ոքէ կը վախնաս եւ ոչ ալ կ'անհանգրստանաս: Իշխաններու վախը եւ տէրերու բարկութիւնը չեն կրնար սարսափեցնել աղքատը: Ոչ ոք կրնայ կողոպտել աղքատը եւ կամ նեղել գայն եւ սպառնալ անոր: Հարուստը անհանգրստացած է եւ անազանգի տակ կը գտնուի, իսկ աղքատը կը ծաղրէ գայն: Հպարտ իշխանը անբարտաւան է հարուստին նկատմամբ, իսկ աղքատը անկարեւոր կը նկատէ գայն: Երկիրը լեցուն է գողերով եւ աւագակներով, բայց աղքատը չի վախնար անոնցմէ: Հրապարակները լեցուն են քսակահատներով եւ բռնաւորներով, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով: Դատաւորները գայլ եւ գազան դարձած են, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով, որովհետեւ չբաւորութեան պատճառաւ, իր կեանքը մեծապէս խաղաղ է գերծ մտահոգութիւններէ, ազատ բոլորին դիմաց, առանց վախի, առանց նախանձի, առանց ոխի եւ հեռու շատ մը մոլութիւններէ:



ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցին քարեղէն շքեղ իր կառոյցէն անջատ, խոնարհ սիրտերով եւ հաւատքով լեցուն հոգիներու հաւաքականութեան մը համախումբ աղօթելու ժողովն է: Անկա Յունարէն առնուած բառ մըն է (Էկլէզիա), որ կը նշանակէ հաւատացեալներու ժողով, ինչ որ միասին եւ հաւաքաբար աղօթելու իմաստն է, որ կը խտացնէ իր մէջ: Արդարեւ, երբ եկեղեցի կ'ըսենք, նախ պէտք է հասկնանք աստուածային սիրով զօդուած, Քրիստոսի Փրկագործութեան Խորհուրդով՝ Աստուծոյ կողմէ որդեգրուած եւ Ս. Հոգւոյ հանճարահրաշ ճառագայթումով լիցքաւորուած, պայծառացած եւ լուսաւորուած հոգիներու միասնական աղօթքը: Այս իմաստն ու նշանակութիւնն է, որ գեղեցկօրէն կ'արտացոլայ Ս. Պատարագի ընթացքին, երբ Քրիստոս որպէս նշխար կը բեկուի, բեմէն սարկաւազը կը պատգամէ. «Ձիրար ողջունեցէք սուրբ համբոյրով եւ անձնք որոնք պատրաստ չեն հաղորդուելու Աստուածային խորհուրդով, թող դուրս ելլեն եկեղեցիէն եւ գալիքին մէջ աղօթեն»: **Շարունակելի**

ՀԱՍՅԷ.



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ  
ՃՂ. Գ. ԹԳ. 18.29-46: Դ. ԹԳ. 2.1-15: ՅԼ. 5.16-20  
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 4.25-30

ՏՕՆ ԵՂԻԱՅԻ ՍԱՐԳԱՐԷԻՆ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 4.25-30

Ձեզի օրինակներով խօսիմ: Իսրայէլի մէջ բազմաթիւ այրիներ կային Եղիայի օրերուն, երբ երեւոյկէս տարի երկինքը չամբուեց եւ ամբողջ երկրին մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ռեւէ մէկուն չորկուեցաւ, այլ որկուեցաւ Սիդոնի մօտիկ Սարեփա գիւղը բնակող այրի կնոջ մը: Նոյնպէս, Եղիսէ մարգարէի օրերուն Իսրայէլի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ՝ միայն Նէեման անուկով ասորի մը:

Այս ակնարկութիւնները լսելով, ժողովարանին մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Ելան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժ ընելու նպատակով գայն տարին մինչեւ կատարը այն լեռան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

\*\*\*\*\*

«ԿՈՐՈՒՍՏԻ ՏԱՆՈՂ ԴՈՒՌԸ ԼԱՅՆ Է»  
Մարթ. 7:13

Այն մարդը որ այս աշխարհին մէջ միայն բարիքներ կը վայելէ եւ իր կեանքը կ'անցնի շաք հեզասահ կերպով, այնպիսին կրնայ փրկութեան նուազ հնարաւորութիւն ունենալ, որովհետեւ իր սպրած դիրքին ու հեզասահ կեանքին համար, կրնայ չստրվիլ ապաւինիլ Աստուծոյ, մինչդեռ այն մարդը, որ կ'սպրի որոշ դժուարութիւններ, անոնց մէջէն դուրս կու գայ որպէս փարբեր մարդ՝ Աստուծոյ վստահող մարդ մը: Դժուարութիւնները մուրճի պէս կրնան գայն ձեռնել, բայց յիշեցէք, որ շիկացած երկաթը մուրճի հարուածներուն փակ միայն կը կտանուի ու նոր ձեւ կը ստանայ: Փորձութեանց հարուածները մեզ ալ կրնան նորոգել եւ նոր դարձնել: Մեր հաւատքը կը դառնայ իրական հաւատք, երբ անկա անցնի փորձութիւններէն: Կը դառնայ ճշմարիտ հաւատք, երբ կեանքի խաւար պահերը համբերութեամբ դիմակալէ:

Ա. ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ԿՈՅՍԵՐ

Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան մէջ վասն հաւատքի նահատակութեան օրինակները անպակաս են:

Այս օրինակներէն մէկն է՝ Հռիփսիմէ անունով կոյս մը, որ յաջողեցաւ հաւատքի ուժով դիմադրել եւ յաղթել իր օրուան թագաւորին՝ Տրդատին:

Ա. Հռիփսիմէ քրիստոնեայ հաւատացեալ մըն էր, որ Հռոմի մէջ քրիստոնեաներուն դէմ կատարուած հալածանքներէն փախած էր ու կ'ապրէր Գայիանէ կոյսի գլխաւորած հաւատացեալ կոյսերու խումբին մէջ: Այս խմբակը հաստատուած էր Հնձաններ կոչուած տեղի մը մէջ, Վաղարշապատի շրջակայքը:

Հայաստանի այդ ժամանակաշրջանի թագաւորը՝ Տրդատ, տակաւին հեթանոս էր եւ ուզեց ամուսնանալ Հռիփսիմէի հետ: Ան անշուշտ մերժեց, որովհետեւ չէր ուզեր կին ըլլալ կոպաշտ թագաւորին: Հռիփսիմէի ժըխտական կեցուածքին որպէս հետեւանք, թագաւորը սպաննել տուաւ ոչ միայն Հռիփսիմէն, այլ նաեւ անոր պետր՝ Գայիանէն եւ իր ընկերուհիները:

Նահատակուած այս 37 կոյսերը կոչուեցան Հռիփսիմեան կոյսեր ու անոնք կը յիշատակուին մինչեւ այսօր մեր եկեղեցիէն ներս:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ո՞վ հիմնեց եկեղեցին եւ ինչո՞ւ համար հիմնեց:

Վատահաբար բոլորս ալ գիտեմք, թէ Յիսուս Քրիստոս եկեղեցիին հիմնադիրն ու գլուխն է: Եկեղեցին Քրիստոսի մարմինն է եւ հաւատացեալները անոր մարմնի անդամներն են (Եփս. 1.22-23, 5.23-30: Կող. 1.18): Քրիստոս եկեղեցին հիմնեց, որպէսզի անոր միջոցաւ բոլոր ազգերուն աւետարանուի իր կատարած փրկագործութեան խորհուրդը (Մատթ. 28. 18-20): Եկեղեցւոյ նուիրապետութիւնը Քրիստոսի փոխանորդն է երկրի վրայ՝ առաջնորդելու համար հաւատացեալները Աստուծոյ շաւիղին մէջ, որովհետեւ քահանաները Տիրոջ դեսպաններն են (Մատթ. Բ.7: Գաղ. 4.14):

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ՄԵՐ ԼԱՒԱԳՈՅՆ ՄԵՍԻԹԱՐՈՒԹԻՒՆՆ Է

- 1.- Իմ նեղութեանս մէջ միփարութիւնս այս է, վասնզի քու խօսքդ զիս կենդանացուց (Սղ. 119.49,50):
- 2.- Օրհնեալ ըլլայ Աստուած՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի հայրը, որ հայրաբար կը գթայ եւ որպէս Աստուած կը միփարէ ու կը զօրացնէ մեզ՝ մեր բոլոր նեղութիւններուն մէջ, որպէսզի մենք կարենանք Աստուծմէ մեր վայելած օգնութիւնն ու միփարութիւնը տալ անոնց՝ որոնք ամէն տեսակի նեղութեանց մէջ են (Բ. Կոր. 1.3,4):
- 3.- Աստուած, որ մեզ սիրեց ու տուաւ մեզի յաւիտենական միփարութիւն եւ բարի յոյս շնորհքով, ձեր սրտերը միփարէ եւ ձեզ հաստատէ ամէն բարի խօսքերու եւ գործերու մէջ: (Բ. Թես. 2.15,16):

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ՏԵՂԷՆ ԶԵՂՐԺՈՂ ԼԵՈ ԶԿԱՅ

Պիտի կարենաք ըսել այս լեռան.- «Հոսկէ հոն տեղափոխուէ, եւ պիտի տեղափոխուի: Ոչ մէկ բան անկարելի պիտի ըլլայ ձեզի համար»: Հոս յիշուած լեռ բացատրութիւնը ցոյց կու տայ, թէ որքան ծանր էր վիճակը պատանիին եւ որքան զօրաւոր տիրապետութիւն հաստատած էր չար ոգին անոր վրայ: Բայց Յիսուսի եւ Յիսուսի հետեւորդներուն դիմաց չար ոգիները եւ չար մարդիկը ոչինչ կրնան ընել: Հետզհետէ աճող հաւատքին դիմաց ոչ մէկ խոչընդոտ կրնայ տոկալ: Լեռ բառին գործածութեամբ, Յիսուս ըսել կ'ուզէ, որ նոյնիսկ եթէ չար ոգիները ամբողջապէս տիրապետած ըլլան մէկու մը վրայ, կամ նոյնիսկ եթէ որոշ մեղք մը ստրկացուցած ըլլայ անձ մը, հաւատքի մարդը, կարող է եւ կարող պէտք է ըլլայ ազատագրելու այդ անձը Չարին ու մեղքին բռնութենէն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՂԱՍԸ

Հաւատակից եղբայր եւ քոյր, անտեղափոխելի լեռ չկայ մեր առջեւ: Յիսուսի անունով մեղքի ամէն լեռ կրնանք տեղէն շարժել, արմատախիլ ընել:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

Պարկեշտ կեանք կ'ունենայ ան, որ կը վախճայ Տիրոջմէ, իսկ ան որ կը յամառի իր ընթացքին մէջ՝ պիտի անարգուի (Առակ 14.2):

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒՂ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 21

Տէ՛ր, քու պարգեւած զօրութեամբդ թագաւորը ուրախ պիտի ըլլայ, եւ պարգեւած յաղթանակովդ մեծապէս պիտի ցնծայ: Անոր սրտին փափաքը կատարեցիր, եւ չմերժեցիր անոր խնդրանքը:

Տէ՛ր, օրհնութեանդ բարիքներով դիմաւորեցիր թագաւորը, եւ գուտ ոսկիէ թագ դրիր անոր գլխուն:

Քեզմէ կեանք խնդրեց, եւ անոր երկար օրեր տուիր, եւ տուիր աւելիով: Քու պարգեւած յաղթանակովդ բարձրացուցիր անոր փառքը, վայելչութիւն ու պատիւ տուիր անոր օրհնութիւններդ անոր վրայ մշտական դարձուցիր, եւ քու ներկայութեամբդ ուրախութեամբը լեցուցիր: Որովհետեւ թագաւորը ՏԻՐՈՋ վստահեցաւ, Բարձեւ լին ողորմութեամբը պիտի չսասանի:

Ո՞վ թագաւոր, քու ձեռքդ պիտի հասնի բոլոր թշնամիներուդ, քու զօրութեամբդ պիտի բռնես քեզ առողները: Զանոնք բոցավառ թոնիրի պիտի վերածես երբ որ յայտնուիս: Տէ՛ր իր բարկութեամբ գանոնք պիտի կլլէ, եւ կրակը պիտի սպառէ գանոնք:

Անոնց ծնունդները պիտի վերցնես աշխարհէն, անոնց սերունդը պիտի բնաջնջես մարդկութեան մէջէն, որովհետեւ քեզի դէմ չարութիւն խորհեցան քեզի դէմ դաւ նիւթեցին, բայց պիտի չյաջողին: Քու նետերդ անոնց դէմ պիտի արձակես, եւ անոնք կոնակ պիտի դարձնեն ու փախչին: Ե՛լ Տէ՛ր, ցո՛յց տուր զօրութիւնդ եւ մենք երգով ու նուագով պիտի ներբողենք հօր գործերդ: